# ԸՆԴՄԻՇՏ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## ԼՐԱՆՈՒՄ Է ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՀԵՐՈՍ ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ



*Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում գերմանական բարբարոսների դեմ մարտնչող իր կավակներին հայ ժողովրդի հղած դիմումին 1943 թվականի մարտի 24-ին Նելսոն Ստեփանյանը պատասխանել է. "Իմ ժողովրդի, իմ հայրենիքի և մեծ կուսակցության առջև երդվում եմ, որ առելի թշնամուն հարվածելու եմ, քանի կրծքիս տակ բաբախում է սիրտս":*

Վերջին անգամ Սովետական Միության հերոս գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանը թռիչք կատարեց 1944 թվականի դեկտեմբերի 14-ին: Հրաման էր ստացել գրոհել ու ոչնչացնել Լիեպայայի նավահանգստում հակառակորդի նավերը: Վաղ առավոտյան կարմիր աստղակիր "Իլերի" գրոհիչների առաջին խումբը նրա գլխավորությամբ ուղղություն վերցրեց դեպի նպատակակետը: Մարտերը կատաղի բնույթ էին կրում: Նելսոնը ճանապարհ է հարթում իր գրոհիչների համար և ցած է գցում թշնամու մեկ կործանիչ, ապա երկրորդը, բայց նույն պահին պայթում է նրա մեքենայի բենզինի բաքը: Կրակի ու ծխի մեջ կորած, նա իր բոցավառված ինքնաթիռը առանց տատանվելու միրճում է դեպի հակառակորդի նավը և վերջին հարվածով նրան նս իր հետ ծովի հատակը տանում: Անվեհեր օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով հետմահու շնորհվեց Սովետական Միության կրկնակի հերոսի կոչում: Նրա վաստակած փառքին ավելացավ նաև անմահությունը:

Նելսոն Ստեփանյանը ապրեց ընդամենը 31 տարի, բայց ապրեց բուռն, իսկական հերոսի կյանքով և ընդմիշտ մնաց սերունդների հիշողության մեջ:

Հայ ժողովրդի քաջարի կավակ Նելսոն Ստեփանյանը ծնվել է 1913 թվականի մարտի 28-ին, Լեռնային Ղարաբաղի հնամենի Շուշի քաղաքում: Մեկուկես տարեկան էր նա, երբ ընտանիքը տեղափոխվեց Երևան: Եկմալյան փողոցի թիվ 13 տունը, ուր ապրում էին նրանք, Նելսոնի հիշողության մեջ մնաց որպես մանկության գեղեցիկ հուշ: Նա իր մանկական պարզ ու սրտաբաց բնավորությամբ դարձել էր խաղընկերների սիրելին: Նրանք ուրախանում էին, երբ Ստեփանյանների տանից ճախրում էին Նելսոնի պատրաստած թղթե ինքնաթիռների մոդելները:

Նա սկսում է սովորել Մ. Գորկու անվան դպրոցում: Դառնում է ավիամոդելիստների ակումբի ակտիվ անդամ: Սիրում էր փինվորական գործը և դպրոցն ավարտելուց հետո 1927 թվականին գնաց Բաքվի հետնակային ուսումնարանում սովորելու: Ավարտելուց հետո նա կարճ ժամանակ աշխատեց քաղաքի գործարաններից մեկում:

1932 թվականին 19-ամյա Նելսոն Ստեփանյանը տեղափոխվեց Դոն և ընդունվեց Բատայսկի քաղաքացիական օդային նավատորմի դպրոցը: 1935-ին գերազանց առաջադիմությամբ ավարտելով, նշանակվեց նույն դպրոցի օդաչու-հրահանգիչ: Այնուհետև նա տեղափոխվեց Միներալնիե Վոդի և նշանակվեց սավառնորդ-հրահանգիչ նավագնացության բարձրագույն դասընթացների օդաչուների նախապատրաստման քաղաքացիական օդային նավատորմում:

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Նելսոն Ստեփանյանը արդեն առաջնակարգ և ճանաչված օդաչու էր: Պատերազմի հենց երկրորդ օրը նա կորակոչվեց, մեկնեց բանակ և գրեց ծնողներին. "Իմ տեղը հայրենիքի պաշտպանների առաջին շարքերում է": Արագորեն տիրապետելով ռազմական տեխնիկային, Նելսոնն իր մարտական գործողություններն սկսեց Հարավ-Արևմտյան ռազմաճակատում: Այստեղ նա կատարեց մարտական 20 թռիչք, հերոսաբար հանդես եկավ Կախովկա, Զապորոժիե, Պոլտավա, Օդեսա, Նիկոլաև քաղաքների համար մղվող մարտերում, որտեղ դրսևորվեցին նրա ռազմական մեծ ձիրքն ու հմտությունը: Մարտերից մեկում Նելսոնը վիրավորվեց: Ապաքինվելուց հետո նա տեղափոխվեց Լենինգրադի պաշտպանության մարտական բնագիծը, որպես բալթիական նավատորմի ավիացիոն գրոհիչ օդակի հրամանատար: Այստեղ նա մի շարք օդային փայլուն մարտեր մղեց, որի համար պարգևատրվեց Լենինի, մարտական Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով: 1942 թ. հոկտեմբերին նրան շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում:

1943 թվականի մարտին արձակուրդ ստանալով, հերոս օդաչուն գալիս է Երևան` հարազատների տեսության: Կարճատև հանգստից հետո Նելսոնը մեկնում է գործող բանակ: Շարունակվում է նրա մարտական սխրանքներով լի ուղին: Լենինգրադի բլոկադայի վերացումից և այդ շրջանում հիտլերյան զորքերի ջախջախումից հետո, Նելսոնի ղեկավարած ստորաբաժանումը տեղափոխվեց Ղրիմ և մասնակցեց թերակղզու ազատագրմանը: Մարտերում ցուցաբերած խիզախության և գնդի գործողությունները հմտորեն գլխավորելու համար նրա կուրծքը կարդարվեց մարտական Կարմիր դրոշի երրորդ շքանշանով:

Երբ կատաղի մարտեր սկսվեցին Մերձբալթիկայի համար, Նելսոն Ստեփանյանի ստորաբաժանումը տեղափոխվեց Տալլինի մարտական գործողությունների շրջանը: Նա իր գնդով խիզախության նոր էջեր գրեց մեծ Հայրենականի տարեգրության մեջ: 1944 թ. օգոստոսի 20-ին իր բացառիկ խիզախ գործողությունների համար անվեհեր օդաչուն ներկայացվեց Սովետական Միության կրկնակի հերոսի կոչման, որը նրան շնորհվեց հետմահու` 1945 թվականի մարտին:

Նելսոնի խորտակիչ թռիչքները մերձբալթյան երկնքում շարունակվեցին մինչև 1944 թվականի դեկտեմբերի 14-ը, երբ նրա գլխավորած ինքնաթիռների ստորաբաժանումը կատարեց բարձր հրամանատարության առաջադրանքը` բալթյան երկինքը և ծովը մաքրելով ֆաշիստներից: "Մարտադաշտից չեմ հեռանա այնքան ժամանակ, մինչև որ իմ սեփական աչքով չտեսնեմ, որ թշնամուց մնացել են փշուրներ",- գրել է Նելսոն Ստեփանյանը: Ահա այս նշանաբանով է մարտնչել ժողովրդի անձնվեր կավակը Օդեսայի և Կիևի, Սևաստոպոլի և Ղրիմի, Լենինգրադի և Մերձբալթիկայի երկնակամարներում: Ծովի վրա և օդային մարտերում ցուցաբերած խիզախության և թռիչքային վարպետության համար նա իրավամբ ստացել է "Բալթիկայի մրրկահավ" անվանումը:

Նելսոն Ստեփանյանը կատարել է 259 մարտական թռիչք, որոնց ընթացքում ոչնչացրել է թշնամու հսկայական ուժեր, նրա անձնական հաշվում գրանցված են հակառակորդի 17 խորտակված նավեր, այդ թվում մեկականակիր և վեց տրանսպորտային, ավելի քան 80 տանկ և 600 ավտոմեքենա, 27 ոչնչացված ինքնաթիռ, 140 կենիթային ու դաշտային հրանոթ, մեկ շոգեքարշ և 40 վագոն, հակառակորդի թիկունքում 150 պայթեցում, մարտադաշտում մնացած 5000 ֆաշիստական փինվոր ու սպա: Ահա Նելսոն Ստեփանյանի մարտական հաշվի ոչ լրիվ ցանկը:

Հայրենիքը, մայր ժողովուրդը հավերժացրել են խիզախ կավակի հիշատակը. հուշարձաններ են կանգնեցվել Երևանում, հերոսի ծննդավայր Շուշիում, ինչպես նաև հազարավոր կիլոմետրեր հեռու` Բալթիկայի ափին` Լիեպայայում, որտեղ վերջին ռումբերը նետեց անարգ թշնամու գլխին... Նրա անվամբ են կոչվել փողոցներ, դպրոցներ, "Նելսոն Ստեփանյան" անունն է կրում նաև ծովի ջրերը ակոսող մի մեծ նավ: Ցավոք սրտի, 1988 թվականին Շուշիում եղած հուշարձանը հրոսակները ջարդուփշուր արեցին: Սովետական Միության քայքայումից հետո էլ Լատվիայի իշխանությունները պահանջեցին Լիեպայայում կանգնեցված արձանը տեղափոխել, և այն տեղափոխվեց Կալինինգրադ:

### ՀԵՐՈՍՆԵՐԸ ՀԵՐՈՍԻ ՄԱՍԻՆ

Այդ հիանալի, խիզախներից խիզախ մարդու մասին կարելի է և պետք է գրել շատ գրքեր, այնքան շատ բան է կապված նրա պանծալի անվան հետ:

Ստեփանյանը մարտական շատ գործողությունների ղեկավար ու կատարող է եղել: Ռմբագրոհային հարվածներ է հասցրել գերմանական նավերին բաց ծովում ու ռազմածովային բազաներում, օդանավակայաններին, մարտկոցներին, տանկերի շարասյուներին ու մոտոհետևակին, հակառակորդի պաշտպանության առաջին գծին և այլ նպատակակետերի: Սովետական Միության կրկնակի հերոս, փոխգնդապետ Ստեփանյանը իր բազեներին տարել է թշնամու դեմ կատաղի ճակատամարտերի, հարվածել անողոքաբար, հաստատակամությամբ և նույնը սովորեցրել իր ենթականերին ու անձամբ ցույց տվել անսահման արիության, խիզախության և ռազմական արվեստի օրինակներ: Նա կոհվեց մարտում, սիրելի Բալթիկայի օդում, վերջնական հաղթանակի օրվանից մի փոքր ավելի շուտ, որի համար այնքան շատ բան է արել նա և որի համար կոհաբերել է իր կյանքը:

Հովհաննես ԻՍԱԿՈՎ,<br>
Սովետական միության ծովակալ

* * *

Ինձ, որպես գրոհային օդաչուի, դաստիարակել է Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Գևորգի Ստեփանյանը: Երբ նա դարձավ մեր կորամասի հրամանատար, ես շարքային օդաչու էի: Նելսոն Գեորգևիչը շատ ժամանակ է նվիրաբերել օժաչուական կազմի պատրաստմանը: Ոչ մի թռիչք, ոչ մի սխալ, առանց նրա կողմից խնամքով քննարկման չի մնացել: Երիտասարդ մարտիկներին մշտապես հաղորդելով իր հարուստ մարտական փորձը, նա մեզանից շատերին օգնել է տիրապետելու ռմբագրոհային հարվածին:

Երբ սպասվում էին բարդ և դժվարին թռիչքներ, Նելսոն Գեորգևիչը ինքն էր նստում ինքնաթիռ և մեկ տանում մարտի, անձնական օրինակով ցույց տալիս, թե ինչպես պետք է անվրեպ խփել թշնամուն:

Ինձ համար հատկապես անմոռանալի է այն մարտական օրը, երբ մենք հարված էինք հասցնում Ս. ռազմածովային բազային: "Իլյուշինների" խումբը գլխավորած թռավ Նելսոն Գեորգևիչը: Նա հմուտ մանևրով հանկարծակի մեկ հասցրեց նպատակակետին, և ընթացքից սկսեցինք գրոհել արագընթաց դեսանտային քարշանավերը: Նա անձամբ խորտակեց դրանցից մեկը:

Նելսոն Գեորգևիչի մասնակցությամբ յուրաքանչյուր թռիչքում օդաչուները, նույնիսկ մեծ փորձ ունեցողները, անհագուրդ ընդօրինակում էին իրենց խիզախ հրամանատարի մարտավարությունն ու վարպետությունը:

Ս. ՈՒԴԱԼՈՎ,<br>
Սովետական Միության հերոս